

Այս անողորմ մարդիքս որ կան,  
 230 Քառսուն օր մեզ պահել տրվան:  
 Աւա՛ղ թէ ոք ի աստ գայցէ,  
 Եւ շատ դրամ հետ իւր չբերէ,  
 Յայնժամ նա հալըն տեսցէ,  
 Որ ոչ մահու, ոչ կենաց է:  
 235 Աստուած առնէ մեզի տէրման,  
 Հանէ զմեզ սորա դրբան,  
 Երթանք տեսնունք ըզՖռանկիստան,  
 Պօղոս Պետրոսի գերեզման:

Եւ ամէն չարաթ դայլն եւ զմեր հա-  
 240 գուստն եւ փարթալն եւ զուճաշն քրքրէին,  
 Թափէին եւ սիրէին ի պարանս. եւ այնպէս  
 կախ փնային մինչ իրիկուն, եւ սակաւ մի  
 միսիթարէաք հետ Հայոց զրուցով հեռեանց:  
 Եւ ասէին մեզ թէ ազգ եւ ազգ է նազարէթն.  
 245 ով մոմ ունի, սէկ, սախգիւան եւ այլ այսպիսի  
 որ թո՛ւյ չունենայ, քսան եւ հինգ օր կու-  
 պահէ. եւ թէ քէպայ կամ կաշի, սօֆ, թույ  
 ալաթ լինի, քառսուն օր պիտի պահէ, եւ թէ  
 դա՛տ չունենայ, քսան օր: Եւ մեք զի դա-  
 250 տարի էաք. բայց վարդապետն ունէր քանի  
 փն թօր սօֆ արմազանցու, վասն այն արգե-  
 լեցին զմեզ քառսուն օր: Ո՛հ, ո՛հ, ո՛հ, վա՛յ  
 զիս: Բայց վարդապետն տրտնջէր եւ յոյժ  
 նեղէր, ճճկո՛հէր եւ անգոսնէր զնոսա. բար-  
 255 կանար, սրտմտէր եւ յոգոց հանէր, ասելով  
 թէ ազատ գոլով եւ անձնիշխան՝ եկաք մտաք  
 իւրովի կամաւ ի նեղ զընտան: